

Ախալքალაქում կარի սրահ բացվեց

Արմենուհի Կազարյանը երիտասարդ դերձակ կին է, որը Ախալքալաքում է ապրում եւ տեղացիներին իր ծառայությունը տարիների ընթացքում տնից էր առաջարկում: Կարի սրահի բացման մասին միշտ մտածում էր, սակայն անհրաժեշտ ֆինանսներ չունեւ: Հարազատներից իմացավ մունիցիպալիտետում դրամաշնորհային մրցույթի հայտարարման մասին: Ախալքալաքի տեղական զարգացման խմբի (LAG)-ի օգնությամբ պատրաստեց նախագծային առաջարկը, որը նախատեսում էր շենքի վերանորոգման աշխատանքները եւ սրահի կահավորումը կարի մեքենաներով եւ այլ անհրաժեշտ իրերով:

Ֆինանսավորումը ստանալուց հետո, նախագծում գրված բոլոր ակտիվությունները իրագործվեց եւ այսօր Արմենուհին Ախալքալաքում գտնվող միակ կարի սրահի սեփականատերն է: Իր շուրջը հավաքեց իրենց գործը լավ իմացող պրոֆեսիոնալներ եւ բնակչությանը տարբեր ձևի ծառայություններ է մատուցում: Նրա մոտ հաճախ են գնում Ախալքալաքի կանայք գեղեցիկ շորեր, շրջագցեստներ եւ բլուզեր կարելու կամ հին շորերը ձեւավորելու համար:



Employees: 4 locals
Total budget of the project: GEL 14,913.46
EU share: GEL 9,350.85
Co-financing: GEL 5,562.61



Սրահում Արմենուհուց բացի 3 տեղացի է զբաղված, նրանցից մեկը Արմենուհու հայրն է, որը հայտնի դերձակ է եւ նրան մունիցիպալիտետում լավ են ճանաչում:

«Չնայած նրան, որ գրեթե ամեն ինչ կարում ենք հաճախորդին էլ գոհ է մեր ծառայությունով, ապագայում էլ պլանավորում ենք ավելացնել նոր ծառայություններ: Շուտով կընդունենք դիզայներ, կստեղծենք ժամանակակից մոդելներ եւ հնարավոր է հաճախորդին պատրաստի շորեր էլ առաջարկենք: Նոր կարող մեքենաները շատ բարձր որակով են աչքի ընկնում, տարբեր դժվարության գործողություններ իրագործելու հնարավորություն են տալիս, ինչը արտացոլվում է կարած շորերի որակի վրա» - ասում է երիտասարդ դերձակը:





Կարի սրահի աշխատանքը համավարակի շրջանում դադարեցվեց: Միայն դիմակներ կարելու իրավունք ունեին: Իսկ դիմակների պահանջարկը այնքան էր աճել, որ բնակչությունը դրանք դեղատանը չէր կարողանում ձեռք բերել: Արմենուհին եւ իր թիմը այս շրջանում անձնվիրաբար աշխատում էին եւ մունիցիպալիտետի բնակչության բարձրացած պահանջարկը բավարարում էին:

«Համավարակի շրջանում կարի սրահների հիմնական գույքնությունը կանգ առավ: Միայն դիմակներ էինք կարում: Շատ մարդիկ կան Ախալքալաքում, ովքեր տնտեսապես անապահով են: Դրա համար որոշեցինք, առանց դիմակի չթողնեինք ոչ մեկին եւ կարիքավոր մարդկանց անվճար բաժանեցինք:

Այսօրվա դրությամբ հաճախորդների թիվը աճեց, ժողովուրդը աստիճանաբար իմանում է կարի սրահի մասին, հարազատների եւ ընկերների մոտ հանձնարարականներ են տալիս եւ հաճախորդները արդեն մունիցիպալիտետի տարբեր գյուղերից են գալիս: Սրահի գտնվելու վայրն էլ է նպաստավոր: Այն գտնվում է տեղի շուկայի եւ ավտոկայանի մոտ, ինչը հարմար է գյուղի բնակչությանը» - ասում է Արմենուհի Կազարյանը:

Կարի սրահում աշխատելով աշխատակիցներն էլ են գոհ եւ իրենց երախտագիտությունն են հայտնում Եվրամիության, GIPA-ի եւ LAG-ի հանդեպ, որոնց աջակցությամբ էլ հնարավոր դարձավ զբաղվելն եւ կատարելն իրենց սիրած գործը:

Նախաձեռնությունը ֆինանսավորվել է Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Զորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ www.enpard.ge.